

ԱՌՈՒՆԴՈՒԹԻՒՆ

(Ժ)է որ գէշան հարմիրը դիպումածով այրի,
ինչ Դարման պէտք է ընել:

ՍԷԿՈՒՆ մարմինը թէ որ յանկարծ
այրի, բայց մէկէն դիմացը առնուի
ու պէտք եղած դարմանները ըլլուի
նէ՝ շատ փնասակար չըլլար: Յայտնի
բան է որ այրուքը խիստ լայն կամ
խոր ըլլայ նէ՝ բժիշկ կանչելու է. իսկ
ինչուան որ անիկայ հասնի՝ աս դե-
ղերս պէտք է ընել: Արբոր այրելուն
պատճառն է եռացած ջուր, եղ կամ
մսի ջուր, և կամ ո՞ր և իցէ հեղա-
նիւթ, թէ որ մարմնոյն ան մասը
զգեստով ծածկած է՝ պէտք է շու-
տով զգեստները հանել, ու այրած
կտորին վրայ պաղ ջուր լեցնել. իսկ
թէ որ զգեստները շուտով կարելի
չըլլայ հանել, զգեստներուն վրայէն
լեցնելու է պաղ ջուրը: (Ժ)է որ մէ-
կը պաղ ջուր չգտնէ, որչափ կարելի է
շուտով պէտք է զգեստները հանել,
ու մարմնոյն այրած տեղը սրբել. բայց
զգուշանալու է որ չըլլայ թէ սկրդի
ելլէ այրած տեղին վրայի մորթը:

Արբոր այրուքը մէկուն զգեստնե-
րը բռնկելէն առաջ գայ, աւելի դը-
ժուար է դարման ընելը. բայց աս
դիպումածին մէջ ալ մարդ պէտք չէ
չփոթի, հապա ամէն կերպով ջանայ
կրակը մարելու: (Ժ)է որ զգեստները
բռնկած անձը քովը պաղ ջուր չու-
նենայ, փոխանակ ջրի համար հեռու
տեղ վազելու և կրակին արծարծելուն
պատճառ տալու, կամ թէ կեցած
տեղը շփոթած ասդիս անդին շար-
ժելու, պէտք է գետինը պառկի, ու
մէկ կողմանէ ուրիշները օգնութիւն
կանչէ, մէկ կողմանէ ալ ինքը ձե-
ռուրներովը կամ հողաթափներովը
ջանայ կրակը մարել: (Ժ)է որ քովը
ուրիշ անձինք գտնուին, պէտք է ա-
նոնցմէ մէկը վազէ երթայ պաղ ջուր
բերէ. իսկ մէկաւնոնք գետինը պառ-
կեցնեն զինքը ինչպէս որ ըսինք, ու

ջանան կրակը մարել, ինչուան որ ջու-
րը գայ: (Ժ)է որ քովերնին պատրաստ
քիչ մը ջուր ունենան, փոխանակ բո-
ցին վրայ թափելու՝ աւելի աղէկ է
թաշկինակ մը կամ խնչ և իցէ լաթի
կտոր մը թրջել ու բռնկած տեղին վը-
րայ պատել: Ս երջապէս այսպիսի
դիպումներու մէջ պէտք է մարդ
առանց շփոթելու ձեռքէն եկած
ջանքը ընէ ու խելք բանեցնէ: Աս
տարիներս Վաղղիային մէջ աղախ-
նին մէկը լուացք ընէլէն ետքը, գի-
շերանց զանոնք բակին մէջ փռելու
ատեն՝ գետինը դրուած ճրագէն ըզ-
գեստին մէկ կտորը կրբռնկի. ասի-
կայ շփոթած կըսկսի դէպ՝ի վեր վա-
զել որ ուրիշները օգնութիւն կանչէ,
անմիջոցին բոլոր զգեստները կրբռն-
կին. և թէպէտ ետքէն ուրիշները
օգնութիւն հասնելով կըմարեն, բայց
ինքը չարաչար կըփնասուի և անով
երկրորդ օրը կըմեռնի: Աս մահը
չէր պատահեր իրեն՝ թէ որ խելք բա-
նեցնելով ան թաց լաթերուն մէկու-
վը կրակը մարէր:

Իսկ թէ որ մէկը աս դարմաննե-
րով կրակին դէմը չկարենայ առնել,
ու մարմինը այրի, նախ ինչպէս որ
ըսինք՝ այրած մասը պաղ ջրի մէջ
խոթելու է. ջրին մէջ ալ քիչ մը
քացախ կամ օղի լեցնելը աղէկ է.
քանի որ ջուրը տաքնայ՝ փոխելու է,
և թէ որ սառ գտնուի՝ պէտք է ջրին
մէջ կտոր մը դնել, որ աւելի պաղ ըլ-
լայ. ասանկ երկայն ատեն մարմնոյն
այրած մասը ջրին մէջ թողու է ին-
չուան որ բժիշկը հասնի: Բայց թէ
որ այրած տեղը չկարենայ ջրի մէջ
խոթուիլ, զոր օրինակ երբոր յանկարծ
մէկուն գլուխը կամ մէջքը այրած ըլ-
լայ, ան ատեն սպունգով՝ մը երկար
ժամանակ նոյն տեղը միակերպ թըր-
ջելու է: Պաղ ջուրը միշտ օգտակար
է այրած վէրքին, թէպէտ և քառորդ
մըն ալ անցած ըլլայ վրան:

(Ժ)է որ մէկուն մարմինը վառօդով

այրի , պէտք է առաջ գնդասեղով մը
վառօդին հատիկները մորթին մէջէն
հանել , ետքը պաղ ջրի մէջ խօթել :

Երբոր այրած տեղը բշտի , պաղ
ջրի մէջ դնելէն ետքը պէտք է գնդա-
սեղով մը ծակել , որպէս զի մէջի հիւ-
թը վազէ . ետքը վրան բարակ լաթ

դնելու է մոմոտած , կամ վրան թարմ
ու անոյշ կարագ կամ ձէթ քսած :

Երբեք են պարզ ու դիւրին դե-
ղերը երբոր մէկուն մարմինը այրի .
բայց երբոր այրուքը սաստիկ է , պէտք
է անհոգ ըլլալ բժիշկ կանչելու :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Լիէերն :

ԼՇԽԱՐՀՔԻՍ վրայ ատեն ատեն
երեւած մեծամեծ մարդիկը ինչ ազ-

գէ որ ըլլան՝ անոր իրաւցընէ մեծ
պատիւ կընեն , բայց իրենց քիչու-